զապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Հայրերու, բացումը կատարեց Ս. Թ. Վարժարանի Ամփիթիատրի քննութեանց։

● Գշ. 22 Յունիս. — Երեկոյեան ժամը 5ին, Հոգ. Տ. Տ. Հայկազուն և Հայրիկ Վարդապետները, որոնք երկու օր առաջ Գէյրութ ժամանած էին Ս. Էջմիածնէն, վերադարձան Ս. Աթոռ։

● Եշ. 24 Յունիս. — Կ. վ. ժամը 4ին, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհաճեան, Հոգ. Տ. Զաւէն Արզ. Զինչինեան և Տիար Կարպիս Հինդլեան, ներկայ գտնուեցան St. John's Ophtalamic Hospital-ի պարտէզին մէջ, St. John's Day-ի առթիւ սարքուած ընդունելութեան։

● Բշ. 28 Յունիս. — Երեկոյեան ժամը 5ին, Հիւս. Ամերիկայի Առաջնորդական Փոխ. Գեր. Տ. Մամբրէ Արքեպս. Գալֆայեան, որ Ս. Էջմիածին գացած էր ներկայ գտնուելու Վեհ. Հայրապետի թաղման հանդիսութեանց, ժամանեց Ս. Աթոռ։ Դիմաւորութեան համար օդակայան գացած էր Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Աղայանեան։ Գեր. Սրբազանը Եշ. 1 Յուլիսի երեկոյեան մեկնեցաւ իր պաշտօնատեղին։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՀԱՐ

Ս. Թարգմանչաց վարժարանին մէջ, Յունիս 5ին և 6ին, տեղի ունեցաւ վարժարանիս տարեկան պահարը, նախաձեռնութեամբ և կազմակերպութեամբ բարեջան Տեսուչ՝ Հոգ. Տ. Կիւրեղ Արզ. Գաբրիկեանի և օժանդակութեամբ վարժարանիս ուսուցչական կազմին, գաղութիս ազգայիններուն, ինչպէս նաև կրթանուէր Տիկիններու։

Ցուցադրուած էին գեղեցիկ ասեղնագործութիւններ, նկարներ և այլ առարկաներ որոնք վարժարանիս աշակերտուհիներու ձեռակերտներն էին մեծաւ մասամբ։

Կ'արժէ յիշատակել թէ դպրոցական այս Պահարը նախորդ տարիներու յաջողութեամբ գոհացուցիչ արդիւնք մը ունեցած է։ Այս պարագան մխիթարական է վանդի անգամ մը ևս կ'ապացուցանէ թէ Եկեղեցիին յետոյ ազգային վարժարանը մեր ուրիշ մէկ նուիրական հաստատութիւնն է և այդու իսկ արժանի մեր ուշադրութեան և գնահատանքին։

ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Կիր. 13 Յունիսի կէսօրէ ետք ժամը 4.30ին, փառանգ. Վարժարանի մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ Ս. Թ. Վարժարանի տարեկան դաշտահանդէսը, նախագահութեամբ Գեր. Տ. Ռուբէն Արքեպս. Մանասեանի և ի ներկայութեան բազմագլուխ Միաբանութեան, ինչպէս նաև օտար յարանուանութեանց հոգ. ներկայացուցիչներու և ժողովուրդի բազմութեան։ Երեք խումբերու բաժնուած մարզիկները յաջորդաբար կատարեցին վազքեր, երկար և բարձր ոստում, մարզանքներ, բուրգեր, զրաշարշաւ և պարանաձգութիւն, որոնցմէ ոմանց, ինչպէս անցեալ տարի, այս տարի ևս իրենց մասնակցութիւնը բերին աղջիկները։ Սրտապնդիչ երեւոյթ մը էր վարժարանիս նախակրթարանի բաժնին մօտաւորապէս 400 երկտեռ աշակերտութեան տողանցքը դաշտավայրին վրայ, դպրոցի նուագախումբին մասնակցութեամբ։ Ներկայ էին նաև վարժարանիս ակաուտական և արենուշային խումբերը իրենց լման համազգեստներով։ Դաշտահանդէսը տեւեց երկու ժամը, որմէ ետք Գեր. Նախագահ Սրբազանը արժանաւորները պարգեւատրեց բաժակներով ու մետալներով։

ԲԱՐԻԶ ՄԱՅՐԱՊԵՏ ՈՒՆԱՆԵԱՆ

Գշ. 15 Յունիսի լուսցող գիշերը, իր մահկանացուն կնքեց Սուրբ Ութիս Մայրապետներէն Բարիզ Ունանեան, յետ երկարատև հիւանդութեան։

Հանգուցեալը ծնած է Առաջաղաղ, 16 Ապրիլ 1898ին։ Առաջին համաշխարհային պատերազմէն ետք իր բնակութիւնը հաստատած է Ֆրանսայի Մարսէյլ քաղաքը։ 8 Մայիս 1935ին եկած է Ս. Աթոռս ուխտագէմ և 1948ին ընդունուած Ս. Աթոռոյս մայրապետաց շարքին մէջ, որպէս կարուհի։

Թաղման արարողութիւնը կատարուեցաւ նոյն օրը, երեկոյեան ժամը 3.30ին, Մայր Տաճարի կից՝ Ս. Էջմիածին մատրան մէջ, նախագահութեամբ Հոգ. Տ. Գարգէ Վրդ. Վրթանէսեանի։ Մարմինը ամփոփուեցաւ Զամթազի գերեզմանավայրը։

Յաւիտենական հանգիստ իր բարի հոգւոյն։

digitised by A.R.A.R.@